В. А. ПОГОСЯН, Армяне – сподвижники Наполеона: история и мифы, *Е., изд-во “Эдит принт”, 2009, 140 с.*



Վերջին տարիներին ես ուշադրությամբ հետևել եմ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր Վարուժան Պողոսյանի գիտական գործունեությանը: Ինչպես ինձ համար պարզվեց, նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը չի սահմանափակվում միայն Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրությամբ: Նա Ֆրանսիայի XVIII դ. վերջի և XIX դ. սկզբի պատմության հայտնի մասնագետ է: Շատ ուշագրավ են նրա «V տարվա ֆրյուկտիդորի 18-ի հեղաշրջումը Ֆրանսիայում» մենագրությունը, ակադեմիկոս Արգար Հովհաննիսյանի աշխատությունների՝ իր կազմած մատենագիտության առաջաբանը, որը շարադրված է դասական պատմագրության չափանիշներով, ինչպես նաև նույն պատմաբանի անտիպ աշխատությունների հրատարակությունը, որոնք նա իրականացրել է հանգուցյալի ծննդյան հարյուրամյակի կապակցությամբ[1]:

Վ. Պողոսյանն ասպիրանտական ուսումնառությունն անցկացրել է Մոսկվայում՝ ԽՍՀՄ ԳԱ ընդհանուր պատմության ինստիտուտում, աշխարհահռչակ պատմաբաններ Վիկտոր Դալինի՝ իր ղեկավարի, և Ալբերտ Մանֆրեդի, որին ես համարում է իր ուսուցիչը, գիտական միջավայրում: Այդ մասին է վկայում նաև Նապոլեոնի հայազգի զինակիցների մասին Վ. Պողոսյանի գիրքը, որը նա նվիրել է Վ. Դալինի հիշատակին՝ խորին հարգանքի տուրք մատուցելով իր ուսուցչին: Ի դեպ, նշեմ, որ Վ. Դալինը, կարդալով սույն թեմային նվիրված նրա հրապարակումներից մեկը, տխրագին նկատել է. «Յավալի է, որ Ալբերտ Մանֆրեդը կենդանի չէ», իսկ մեկ այլ առիթով կատակով նրան անվանել է «կրքոտ բոնապարտիստ» (էջ 25):

Կարևոր եմ համարում ընդգծել, որ ֆրանսերենի հիանալի իմացությունը հնարավորություն է տվել Վ. Պողոսյանին՝ հիմնականում ֆրանսիական սկզբնաղբյուրների հիման վրա ստեղծելու մի ճշմարտապատում գիրք Նապոլեոնի երկու հայազգի զինակիցների՝ կայսեր նշանավոր թիկնապահ Ռուստամի և Պատվո լեգեոնի ասպետ Ուանիս (Հովհաննես) Պետրոյի մասին, ինչպես նաև գիտականորեն ժխտելու մարշալ Մյուրատի ծագումով հայ լինելու առասպելը: Հեղինակի հիմնական նպատակը նշված գործիչների կենսագրականներում հստակություն սահմանելն է, նրանց վերագրված տարբեր

---

[1] **Погосян В. А.** *Переворот 18 фрюктидора V года во Франции, Е., 2004: Ակադեմիկոս Արգար Ռուբենի Հովհաննիսյանի տպագիր աշխատությունների մատենագիտություն, Ե., 2008:* **Иоаннисян А.** *Неопубликованные произведения, Е., 2009.*

առասպելները հերքելն ու անճշտությունները սրբագրելը, որը նա կատարել է գիտական բարձր մակարդակով, առանց հույզերի և անկողմնակալ դիրքերից:

Գրքի առաջին գլուխը նվիրված է մամլուք Ռուստամին: Յույց է տրվում, որ թեև նա ծնվել է Թիֆլիսում, Ռազա անունով ոչ հարուստ առևտրականի ընտանիքում, ազգությամբ եղել է հայ: Ռուստամի ազգային պատկանելությունը, ինչպես նշում է հեղինակը, պատմագրության մեջ բազմիցս շահարկումների տեղիք է տվել, քանի որ եվրոպացի պատմաբանները նրան թյուրիմացաբար և անիրավացիորեն հաճախ ներկայացրել են իբրև վրացու: Այնուհետև Ռուստամի ընտանիքը տեղափոխվել է Ղարաբաղ:

Տասը տարեկան հասակում Ռուստամին հափշտակել են մորից և իբրև ստրուկի վաճառել ու վերավաճառել տարբեր տերերի: Ճակատագիրը նրան հասցրել է Կոստանդնուպոլիս (Յասըր բազար), որտեղ նա յոթերորդ և վերջին անգամ վաճառվել է Կահիրեից այստեղ եկած՝ Եգիպտոսը կառավարող 24 մամլուքներից մեկի՝ Սալա բեյի մարդկանց: Եգիպտոսում երկամյա վարժանքից հետո Ռուստամն ընդգրկվել է Սալա բեյի մամլուքյան կորպուսում, իսկ նրա մահից հետո ծառայության անցել շեյխ Էլ-Բեքիրի մոտ:

Գրավիչ և գեղեցիկ լեզվով Վ. Պողոսյանը նկարագրում է սիրիական անփառունակ արշավանքից վերադարձած գեներալ Բոնապարտի հանդիսավոր մուտքը Կահիրե 1799 թ. հունիսի 1-ին, որտեղ շեյխ Էլ-Բեքիրը նրան է նվիրել մի սքանչելի արաբական սև նժույգ և մամլուք Ռուստամին: Նույն օրը երեկոյան գեներալը նրան նշանակել է իր թիկնապահը: Հեղինակը մանրամասնորեն հետևում է Ռուստամի անցած ուղուն, փաստերով համոզում ընթերցողին, որ շուրջ տասնհինգ տարի նա եղել է Նապոլեոնի ամենասիրելի անձանցից մեկը: Բայց միաժամանակ նա չի զլանում հերքել ազգությամբ հայ տարբեր հեղինակների առաջադրած այն վարկածը, ըստ որի՝ վերջիններս (Բ. Կասպարյան-Բրիկու, Ա. Բախչինյան) զուր ջանքեր են գործադրում «ապացուցելու», թե իբր Ռուստամը, որը 1814 թ. հրաժարվել է ուղեկցել Էլբա կղզի աքսորված Նապոլեոնին, դրանով իսկ նրան չի դավաճանել: Անհերքելի փաստերով հեղինակն ապացուցում է Ռուստամի դավաճանությունը:

Վ. Պողոսյանը հերքում է նաև այն վարկածը, թե իբր Ռուստամը նապոլեոնյան կայսրության անկումից հետո վերադարձել է Հայաստան: Ինչպես նա հիմնավորում է, Ռուստամն իր կյանքի հաջորդ մասն ապրել է Ֆրանսիայում, իսկ 1840 թ. դեկտեմբերի 15-ին մամլուքի ավանդական համազգեստով մասնակցել Նապոլեոնի աճյունի վերահուղարկավորմանը Փարիզում:

Հեղինակն ընդգծում է Ռուստամի նվիրվածությունն իր ժողովրդին, նշում, որ մամլուքը երբեք չէր մոռանում իր հայկական ծագումը, հղում է փաստեր, որոնք վկայում են նրա հոգատար վերաբերմունքի մասին այն ամենի հանդեպ, ինչը պատկանում էր հայ ժողովրդին: Երբ Նապոլեոնի՝ 1810 թ. մայիսի 12-ի դեկրետով Իտալիայի թագավորության բոլոր մենաստանները վերացվել էին, Ռուստամի միջնորդությամբ կայսրը բացառություն էր արել միայն Վենետիկի Մխիթարյան միաբանության համար: Իսկ երբ 1812 թ. ֆրանսիական զորքերը գրավել են Մոսկվան, դարձյալ Ռուստամի միջամտության շնորհիվ քաղաքի հայկական թաղամասը չի հրկիզվել:

Գրքի երկրորդ գլուխը նվիրված է Նապոլեոնի մամլուք, կայսերական գվարդիայի անդամ Ուանիս Պետրոյին: Մատենադարանում պահվող նրա անձնական արխիվի սակավաթիվ վավերագրերի հիման վրա Վ. Պողոսյանը ցույց է տալիս, որ Պետրոսի և Մարգարիտի որդի Ուանիսը ծնվել է 1781 թ. սեպտեմբերի 12-ին Շուշիում: Հեղինակը նշում է, որ փաստերի բացակայության պատճառով հնարավոր չէ ստուգապես ճշգրտել, թե երբ է նա առևանգվել և

վաճառվել Եգիպտոսի մամլուքներին: Հայտնի է միայն, որ 1799 թ. հունիսի 19-ին նա զինվորական ծառայության է անցել ֆրանսիական բանակում՝ սիրիական ենիչերիների ջոկատում: 1805 թ. դեկտեմբերի 2-ին կայսերական գվարդիայի կազմում նա մասնակցել է Աուստերլիցի նշանավոր ճակատամարտին, ծանր վիրավորվել, որի համար պարգևատրվել է Պատվո լեգեոնի շքանշանով: Ընդհանուր առմամբ, ինչպես փաստում է Վ. Պողոսյանը, Ուանիսը մասնակցել է տասը ռազմարշավի: Ենթադրություն է արվում, որ 1812 թ. ռուսական արշավանքին նա չի մասնակցել: 1813 թ. առողջական վիճակի վատթարացման պատճառով մամլուքն ազատվել է զինվորական ծառայությունից: Ի տարբերություն Ռուստամի՝ Ուանիսը Նապոլեոնին հավատարիմ է մնացել մինչև պատմության ասպարեզից նրա հեռանալը, «Հարյուր օրվա» ընթացքում անցել է կայսեր կողմը, մասնակցել նաև Վաթերլոոյի ճակատամարտին:

Վ. Պողոսյանի գրքից տեղեկանում ենք, որ Ուանիսը 1816 թ. ընդմիշտ թողել է Ֆրանսիան և Ռուսաստանի կայսր Ալեքսանդր I-ի թույլտվությամբ հաստատվել Ղարաբաղում, որտեղ անցկացրել է կյանքի վերջին շրջանը: Ըստ արխիվային նորահայտ փաստաթղթերի՝ հեղինակն առաջին անգամ ուսումնասիրել է նրա կյանքի վերջին ժամանակահատվածը, ապացուցել, որ 1820-ական թվականներին Նապոլեոնի նախկին զինվորը նպաստել է ռուսական զորքերի հաղթանակներին, մասնակցել 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմին, որի համար արժանացել է ռուսական «1826, 1827, 1828 թթ. պարսկական պատերազմի համար» շքանշանի: Սակայն հայտնի չէ, թե երբ և ինչ հանգամանքներում է նա կնքել իր մահկանացուն:

Գրքի վերջին՝ երրորդ գլխում, քննարկելով նապոլեոնյան հանրահայտ զորավար մարշալ Իոախիմ Մյուրատի կարծեցյալ հայկական ծագում ունենալու վարկածը, Վ. Պողոսյանը հանգում է այն հաստատուն եզրակացության, որ վարկածը զուրկ է նվազագույն գիտական հիմքից: «Յուրաքանչյուր ազնիվ պատմաբանի առաջնահերթ պարտքը հենց այն է, որ պսակազերծի դատարկ առասպելները և սեփական ժողովրդին հայտնի ճշմարտությունը նրա անցած պատմական ուղու մասին»,- ավարտում է իր խոսքը հեղինակը (էջ 116):

Վ. Պողոսյանի գիրքը գրված է հենց այդ ազնիվ մտահոգությամբ: Այն ընթերցվում է չթուլացող հետաքրքրությամբ և շատ բան է տալիս ընթերցողի մտքին ու սրտին:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Մ. Ս.
Պատմական գիտությունների դոկտոր